սինքն հրաժարելով ամենայն գործոց չարեաց և մի՛ ներկեսցուք ումեք ոչ ոք արանց գործեցեալ գործս չարութեանց 'ի մէնջ և բառցցուք չարն 'ի միջէ մերմէ ճանաչելով նմայ իբր թշնամի քոյ, և պատուեսցուք արանց բարեաց ոչ ըստ արժանոյ բնութեան իւրոյ թէ ոչ ըստ արժանոյ գործոց բարեաց 'ի ձեռաց նորայ իբր սիրելեաց քոյ, և դու Տէր պահեա զօրութիւն բանական հոգւոյ մերոյ ընդ այս անօթս հոգեղէնս, զի լիցուք համեմատ ասացելոյ բանին որդոյ քոյ սիրելոյ այսինքն, որդիք աշխարհիս յայսմիկ իմաստնագոյն քանթէ որդիս լուսոյ, և կրկին ոչ հաւատամք այլոց բանսարկուից բանից բայց քեզ Տէր, և ոչ տամք տեղի փոփոխական բնութեանս մերոյ շարժիլ ըստ բնական սովորութեան իւրոյ որպէս յառաջնում, բայց ըստ կամաց և պատուիրանաց քոց ահա յուսալով 'ի քեզ միայնոյդ Արարչիդ մերոյ թողուլով միտ և կամս և ցանկութիւնն սրտի մերոյ տղայական, երիտասարդական և ծերութեան, և հաւատալով զի ցանկութիւն հոգեղէն բնութեան մերոյ ունայն է, արիութեամբ գօտի ընդ մէջ ածելով զօրութեամբ բանական հոգոյ մերոյ՝ օգնականութեամբն քոյ ելանեմք 'ի գործ յօրինել մեզ, և վասն փոփոխական բնութեան մերոյ որոգայթ պինդ Շխթայիւք կապել օրինօք օրէնս կարգաղրութեան բարի և 'ի զօրութենէ բանական հոգոյ մերոյ մուծանել այս փոփոխական